ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/4-1

ք. «Գավառ» 15.02. 2022 թ.

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Գ. Սողոմոնյանի ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նատալի ֆարմ>> ՍՊԸ- ն, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

Сканировано с CamScanner

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսակաևու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1880040 /մեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար քառասուն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկըներկայացվելէառանցԱԱՀ-ի, ապապայմանագիրըկնքելիս «ներառյալԱԱՀ-ն» բառերըհանվումեն:* [21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀօրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա փուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Сканировано с CamScanner

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է 22 դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀՕրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀՕրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ.[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Сканировано с CamScanner

սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում էպայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Վաճառողի առաջարկության առկայության դեպքում,պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը,իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

---

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Сканировано с CamScanner

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _5___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ	<<Նատալի ֆարմ>>
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21	ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ 2/2
«Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ	2/հ 1570005065330100
h/h 220085140329000	հՎՀՀ 01222567
ՀՎՀՀ 08417304	էլ. հասցե [illegible]
Տնօրեն՝ Գ. Սողոմոնյան	[illegible]
/ստորագրություն/	/ստորագրություն/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել [illegible] չհակասող դրույթներ:

Сканировано с CamScanner

Հավելված N 1
«15» 02. 2022 թ. կնքված
«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/4-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
11	33141110/501	Գիպսակապ բժշկական 3մ x 20սմ	Գիպսակապ բժշկական 3մx20սմ Եվրոմեդ	Գիպսակապ բժշկական 3մx20սմ: Ֆորմատ 3մx20սմ: Ֆորմատ- հատ: «պահել չոր տեղում»:	հատ	350	245000	700	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	Ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելուց հետո 1-ին փուլի համար :Եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շատ
18	33141183/503	Զոնդ ստամոքսային CH-14	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Զոնդ ստամոքսային /նազոգաստրալ զոնդ/CH14,Պատրաստված է փափուկ, ատրավմատիկ PVC-ից:	հատ	90	2700	30	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
19	33141183/504	Զոնդ ստամոքսային CH-16	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Զոնդ ստամոքսային /նազոգաստրալ զոնդ/CH16,Պատրաստված է փափուկ, ատրավմատիկ PVC-ից:	հատ	90	13500	150	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
20	33141183/505	Զոնդ ստամոքսային CH-18	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Զոնդ ստամոքսային /նազոգաստրալ զոնդ/CH18,Պատրաստված է փափուկ, ատրավմատիկ PVC-ից:	հատ	90	7200	80	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
21	33141183/506	Զոնդ ստամոքսային CH-20	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Զոնդ ստամոքսային /նազոգաստրալ զոնդ/CH20,Պատրաստված է փափուկ, ատրավմատիկ PVC-ից:	հատ	90	1800	20	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	

Сканировано с CamScanner

35	33141211/522	թթվածնային բեղիկներ մեծահասակի	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	թթվածնային բեղիկներ մեծահասակի, միանվագ օգտագործման համար	հատ	180	270000	1500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
43	33141211/530	էնդոտրախեալ խողովակ չափսը 3,5 առանց մանժետի	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	էնդոտրախեալ խողովակ 3,5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	240	4800	20	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
44	33141211/531	էնդոտրախեալ խողովակ չափսը 5 առանց մանժետի	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	էնդոտրախեալ խողովակ 5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	240	4800	20	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
45	33141211/554	էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 6	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	էնդոտրախեալ խողովակ մանժետով N6,Պատրաստված է փափուկ, ատրավմատիկ նյութից	հատ	240	14400	60	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
46	33141211/555	էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 6,5	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	էնդոտրախեալ խողովակ մանժետով 6.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ	հատ	240	2400	10	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
47	33141211/556	էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 7	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	էնդոտրախեալ խողովակ մանժետով 7 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	240	72000	300	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
48	33141211/557	էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 7,5	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	էնդոտրախեալ խողովակ մանժետով 7.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ	հատ	240	72000	300	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
49	33141211/558	էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 8	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	էնդոտրախեալ խողովակ մանժետով 8 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ	հատ	240	72000	300	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
53	33141211/562	Փոխներարկման համակարգ	Բի Բրաուն	Փոխներարկման համակարգ ինֆուզոմատի համար "Ո	հատ	500	25000	50	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	

Сканировано с CamScanner

		ինֆուզոմատի համար "Π INRAFIX" 180սմ (4063005)		INRAFIX" 180սմ (4063005)							
60	33141136/504	Կատետեր միզային 2-ճյուղանի CH-8	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Կատետեր միզային 2-ճյուղանի CH-8	հատ	220	4400	20	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
61	33141136/505	Կատետեր միզային 2-ճյուղանի G-10	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Կատետեր միզային 2-ճյուղանի G-10	հատ	220	4400	20	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
62	33141136/506	Կատետեր միզային 2-ճյուղանի G-12	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 12Fr սիլիկոնապատ: Ֆորմատ-հատ:	հատ	215	4300	20	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
63	33141136/507	Կատետեր միզային 2-ճյուղանի G-14	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Կատետեր միզային 2-ճյուղանի G-14	հատ	218	43600	200	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
64	33141136/508	Կատետեր միզային 2-ճյուղանի G-16	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 16Fr սիլիկոնապատ: Ֆորմատ-հատ	հատ	218	109000	500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
65	33141136/509	Կատետեր միզային 2-ճյուղանի G-18	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 18Fr սիլիկոնապատ: Ֆորմատ-հատ:	հատ	218	174400	800	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
66	33141136/510	Կատետեր միզային 2-ճյուղանի G-20	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 20Fr սիլիկոնապատ: Ֆորմատ-հատ:	հատ	218	17440	80	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
67	33141136/511	Կատետեր միզային 3-ճյուղանի G-20	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Միզային կաթետր Ֆոլի եռճյուղ 20Fr սիլիկոնապատ: Ֆորմատ-հատ:	հատ	300	15000	50	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
68	33141136/513	Կատետեր միզային 2-ճյուղանի G-22	Միզային կաթետր Ֆոլի Եվրոմեդ	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 22Fr սիլիկոնապատ: Ֆորմատ-հատ:	հատ	240	7200	30	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
69	33141136/519	Կատետեր միզային 3-	Հուայան էնջել Մեդիքալ	Կատետեր միզային 3-ճյուղանի G-22	հատ	300	15000	50	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	

Сканировано с CamScanner

		Ճյուղանի G-22	Ինսթրմենթ								
107	33141142/503	Ներարկիչ ասեղով 10մլ G-21	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Ներարկիչ 10,0- եռակոմպոնենտ, ասեղ 21 G: Պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից: Ֆորմատ- հատ:	հատ	24	288000	12000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
108	33141142/504	Ներարկիչ ասեղով 20մլ G-21	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Ներարկիչ 20,0- եռակոմպոնենտ, ասեղ 21G: Պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկպոլիվինիլքլորիդից: Ֆորմատ- հատ:	հատ	33	330000	10000	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
110	33141142/511	Ներարկիչ ասեղով 50մլ G-21	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիփմենթ	Ներարկիչ 50,0- եռակոմպոնենտ, պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկպոլիվինիլքլորիդից: Ֆորմատ- հատ:	հատ	90	1800	20	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
122	33141120/501	Բժշկական պորտասեղմիչ №1	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Պորտի սեղմիչ-մեկանգամյա օգտագործման , պլաստմասե, ստերիլ	հատ	38	3800	100	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
133	33141143/501	Սկարիֆիկատոր №200	Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Սկարիֆիկատոր՝ մատծակիչ արյան անալիզ վերցնելու համար, միանվագ օգտագործման, պլաստիկ ստերիլ: Ունի բարակ ասեղ, որը պատված է պլաստմասե շապիկով (կափարիչով):	հատ	4,8	2400	500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
145	33141157/501	Նշտարի սայր 10 №100	Շեղբ վիրահատական Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Շեղբ վիրահատական(նշտարի սայր) N10 : Տուփում 100 հատ , չժանգոտվող մետաղից:	հատ	20	4000	200	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
146	33141157/502	Նշտարի սայր 11 №100	Շեղբ վիրահատական Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Շեղբ վիրահատական(նշտարի սայր) N11 : Տուփում 100 հատ , չժանգոտվող մետաղից:	հատ	20	4000	200	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
147	33141157/504	Նշտարի սայր 15 №100	Նշտարի սայր Հուայան էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Շեղբ վիրահատական(նշտարի սայր) N15 : Տուփում 100 հատ , չժանգոտվող մետաղից:	հատ	20	4000	200	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	

Сканировано с CamScanner

148	33141157/505	Նշտարի սայր 23 №100	Նշտարի սայր Հուպյան Ինոքել Մեդիքալ Ինստրումենթ	Շեղք վիրահատական(նշտարի սայր) N23 : Տուփում 100 հատ , չժանգոտվող մետաղից:	հատ	20	10000	500	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	
149	33121180/501	Ճնշաչափ աներոիդ ստետոսկոպով	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ էքվիպմենթ	Ճնշաչափ ստետոսկոպով - ՁՃ չափման սարք, ցուցիչով, մանժետով, ստետոսկոպով: Ֆորմատ- հատ:	հատ	3300	29700	9	ք. Գավառ Ազատության 21	Ըստ պատվիրատուի պահանջի	

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21, «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-16:00:

ԳՆՈՄ

<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
«Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
հ/հ 220085140329000
ՀՎՀՀ 08417304
Տնօրեն՝ Գ. Սողոմոնյան

Հաստատություն
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Նատալի Ֆարմ>>
ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ 2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
Հեռ. (010)244212
գլխավոր տնօրեն

Հաստատություն
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
"НАТАЛИ ФАРМ"
"NATALI FARM"

Сканировано с CamScanner

Հավելված N 2
«15» «02» 2022 թ. կնքված
«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/4-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1-159	Բժշկական նշանակության ապրանքներ	Բժշկական նշանակության ապրանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100. %	

*Վճարմանենթակագումարներըներկայացվում են ամբողջականարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
**Հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՂ
<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
«Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/6
հ/հ 220085140329000
ՀՎՀՀ 08417304
Տնօրեն՝ Գ. Սողոմոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<Նատալի ֆարմ>>
ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ 2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Էլ. հասցեն՝
գլխավոր տնօրեն Ա. Ասատրյան
/ստորագրություն/
01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
«NATALI FARM»

Сканировано с CamScanner